ՑՈՎԻՆԱՐ ՀՐԱՅՐԻ
ՄՈՎՍԻՍՅԱՆ

Արվեստագիտության թեկնածու, դոցենտ, ԵՊԿ գիտական գծով պրոռեկտոր
E-mail: tsmovsisyan@yahoo.com
Doi:10.58580/18290019-2022.1.62-8

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական
խորհրդի երաշխավորությամբ՝' Գոհար Կառլենի Շագոյանի՝
2.12.2022 թ., ընդունվել է տպագրության' 11.12.2022 թ.,
ներկայացրել է հեղինակը' 25.11.2022 թ.

ԵՊԿ Կ. ՍԱՐԱՋԵՎԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ

Ամփոփում

Կ.Ս.Սարաջևը հրավիրվել է Երևանի կոնսերվատորիա խորհրդային պատմության դժվարին ժամանակաշրջանում՝ 1936-1937 թթ.: Մի քանի տարի անց՝ 1940-ականների սկզբից, վերջնականապես հաստատվել է Հայաստանում՝ իր ճակատագիրը կապելով նրա հետ և մինչև իր կյանքի վերջ այստեղ բազմակողմանի գործունեություն է ծավալել, այդ թվում՝ տասնհինգ տարուց ավելի կոնսերվատորիայի ռեկտոր է եղել: Հոդվածում ընդգծվում է Սարաջևի՝ որպես Կոնսերվատորիայի գրադարանի կազմակերպչի և հիմնադրի հսկայական ներդրումը: Հայաստանում գտնվելու առաջին իսկ օրվանից Կոնստանտին Սարաջևը որոշել է իր անգին գրադարանը, որը հավաքել էր իր ողջ կյանքի ընթացքում, նվիրաբերել կոնսերվատորիային: Այսօր գրադարանային ֆոնդն ունի ավելի քան քսան հազար օրինակ գրքեր, դասագրքեր, կլավիրներ և սիմֆոնիկ պարտիտուրներ, որոնցից երկու հարյուր գիրք և մոտ երկու հազար նոտա ու պարտիտուր պատկանում են Սարաջևի ֆոնդին: Կոնսերվատորիայի այս անգնահատելի հարստությունը պահպանվում և բազմապատկվում է Կոնստանտին Սարաջևի անվան գրադարանի մի քանի սերունդների աշխատակիցների ջանքերի, աշխատանքին անսահման նվիրվածության և հոգատար վերաբերմունքի շնորհիվ:

Բանալի բառեր. Սարաջև, մանկավարժություն, աշխատանք, կատարողական արվեստ, կազմակերպիչ, հիմնադիր, կոնսերվատորիա, գրադարան:

Abstract

Musicologist, PhD in Arts, Associate Professor at Yerevan State Conservatory **Tsovinar Hrayr Movsisyan. - "K. S. Sarajev Library of the Yerevan State Komitas Conservatory."**

K. S. Sarajev was invited to Yerevan Conservatory in 1936-37. A few years later, in the early 1940s, he eventually settled in Armenia, and until the end of his life undertook various activities here, including serving as rector of the Conservatory for more than fifteen years The article highlights the huge contribution of Sarajev as the organizer and founder of the Conservatory Library. From the first day of his stay in Armenia, Konstantin Sarajev donated his personal invaluable library to the Conservatory. Today, the library holds more than twenty thousand copies of books, textbooks, claviers and symphonic scores, among which two hundred books and around two thousand notes and scores belong to the Sarajev Foundation. The library named after Konstantin Sarajev has been able to maintain and grow this valuable collection thanks to the dedication and hard work of its employers over several generations.

Key Words: Saradjev, pedagogy, work, performing arts, organizer, founder, conservatory, library.

Абстракт

Музыковед, кандидат искусствоведения, доцент Ереванской государственной консерватории **Цовинар Грайровш Мовсисян. - "Библиотека им. К. С. Сараджева Ереванской государственной консерватории им. Комитаса".**

К. С. Сараджев был приглашен в Ереванскую консерваторию в непростой период советской истории — в 1936-1937 гг. Спустя несколько лет, с начала 1940-х, он окончательно обосновался в Армении, связав с ней свою судьбу и до конца жизни вел здесь многогранную деятельность, в том числе, находясь более пятнадцати лет на посту ректора консерватории. В статье освещается огромный вклад Сараджева как организатора и основоположника консерваторской библиотеки. С первого дня пребывания в Армении Константин Соломонович решил преподнести в дар консерватории свою бесценную библиотеку, которую собирал в течение всей жизни. Сегодня фонд библиотеки насчитывает более двадцати тысяч экземпляров книг, учебников, клавиров и симфонических партитур, среди которых двести книг и около двух тысяч нот и партитур принадлежат фонду Сараджева. Это бесценное достояние консерватории хранится и умножается, благодаря усилиям, безмерной преданности своему делу и заботливому отношению нескольких поколений работников библиотеки имени Константина Сараджева.

Ключевые слова: Сараджев, педагогика, работа, исполнительское искусство, организатор, основоположник, консерватория, библиотека.

Նվիրվում է Կ. Սարաջևի ծննդյան 145-ամյակին

Նախաբան

Այսօր Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան նշում է իր մեծ երախտավորներից մեկի՝ Կոնստանտին Սոլոմոնովիչ Սարաջևի ծննդյան 145-ամյակը.

Մեծ երաժիշտ, ջութակահար, դիրիժոր, մանկավարժ, ազգային դիրիժորական դպրոցի հիմնադիր, նվիրյալ մտավորական, մշակութային-հասարակական գործիչ, որի ներդրումն ազգային օպերային և սիմֆոնիկ արվեստում անգնահատելի է: Սարաջևին ճակատագիրը կապեց Հայաստանի և մասնավորապես կոնսերվատորիայի հետ մեր երկրի համար վճռորոշ, բարդ և հակասական ժամանակաշրջանում:

Մեծ երաժշտի առաջին, կարճատև այցը մոտ մեկ տարի տևողությամբ, 1936-1937 թվականներին էր: Սրանք խորհրդանշական տարեթվեր են Խորհրդային պատմության մեջ՝ իրենց ողբերգական և անդառնալի հետևանքներով: Այդ ժամանակահատվածում էր, որ նորաստեղծ կոնսերվատորիայի ղեկավարության հրավերով Երևան ժամանեց այդ վառ ու լուսավոր անհատականությունը: Այդ կարճ ժամանակահատվածում արդեն կոնսերվատորիականները հասցնում են ճանաչել ու սիրել Սարաջևին, շատերի համար այդ ծանոթությունը վերածվում է ջերմ բարեկամական հարաբերությունների: Սակայն ինչ-ինչ պատճառներով որոշ ժամանակ ընդհատվում է Սարաջևի գործունեությունը Հայաստանում: Սա, թերևս, Կոնստանտին Սարաջևի կենսագրության չլուսաբանված, կամ, ասենք, քիչ լուսաբանված, քողարկված ժամանակահատվածն է, որին, կարծում ենք, հարկ է մանրամասնորեն անդրադառնալ՝ նորագույն պատմության աշխարհընկալմամբ ու նորագույն շեշտադրումներով լուսաբանելով այդ շրջանի փաստերն ու իրադարձությունները՝ մոռացման գնդաններից դուրս բերելով և լուսաբանելով բոլոր օբյեկտիվ և սուբյեկտիվ դրդապատճառները, հանգամանքները, որոնցով պայմանավորված էր նրա մեկնումը: Սակայն, դա մեկ այլ զեկուցման, իսկ գուցե նաև առանձին ուսումնասիրության նյութ է:

Սարաջևի հաջորդ այցը 1940-ականների սկզբին էր, և այս անգամ Կոնստանտին Սոլոմոնովիչը ծավալեց իր երկարատև, բազմակողմանի ու բեղմնավոր գործունեությունը Հայաստանում՝ ավելի քան մեկ ու կես տասնամյակ գլխավորելով մայր բուհը:

Մեծ մտավորականը

Մեծ մտավորականի բազմաշերտ ու ծավալուն գործունեության ոլորտներից կցանկանայինք անդրադառնալ այն անչափելի ավանդին, որ ունեցավ Կոնստանտին Սարաջևը, որպես կոնսերվատորիայի գրադարանի հիմնադիր և նախաձեռնող: Տարօրինակ, բայց նաև կարծես խորհրդանշական նախախնամությամբ, Սարաջևը հայտնվում է կոնսերվատորիայում ոչ այնքան բարենպաստ իրավիճակներում: Այս հոբելյանական տարեթիվն էլ, որին ընդառաջ նախապատրաստվել էինք Սարաջևյան ընթերցումներին, համընկավ այն օրերին, երբ մեր հարյուրամյա բուհը նախաձեռնեց իր հիմնադրոգումը, երբ աշխարհաքաղաքական իրադարձությունները զարգանում են արագ և անկանխատեսելի կերպով, և ցավոք, այդ զարգացումները բացասաբար են անդրադառնում նաև մեր մշակութային ձեռնարկների պատշաճ իրականացման վրա: Մեր գիտաժողովին մասնակցության հայտ ներկայացրած գործընկերները տարբեր պատճառներով չկարողացան ներկա գտնվել այստեղ: Անկեղծ ասած, մենք էլ ունեինք որոշակի երկմտանք՝ արդյո՞ք ժամանակն է այս պայմաններում գիտաժողով անցկացնելու: Սակայն դրական որոշումն է՛լ ավելի վճռական դարձավ, հենց այն օրերին, երբ հիմնանորոգման անհրաժեշտությամբ սկսեցինք տեղափոխել Կ. Ս. Սարաջևի անվան գրադարանը իր անգնահատելի գանձերով, իր անհուն հարստությամբ:

Կ. Սարաջևի դիմում-նամակը

Պետք է կրկնեմ այն հանրագիտարանային փաստը, որ գալով Հայրենիք՝ Խորհրդային Հայաստան, Կոնստանտին Սարաջևն իր հետ տեղափոխում է իր գրադարանը, որը տասնյակ տարիներ հավաքել ու փայփայել էր՝ հստակ որոշումով, որ այն մասամբ նվիրաբերելու է նորաստեղծ Օպերային թատրոնին, սիմֆոնիկ նվագախմբին, իսկ գերիշխող մեծամասնությունը հատկացնելու է կոնսերվատորիային: Պահպանվել է Կ. Սարաջևի դիմում-նամակը ուղղված ՀԽՍՀ Ժողկոմխորհրդի նախագահ Արամ Փիրուզյանին, որտեղ նա հայտնում է՝ Երևանի կոնսերվատորիայում երաժշտական գրադարան հիմնելու իր մտադրության մասին: Ինչպես նաև շարադրում է իր պատկերացումները, թե ինչ պայմաններում պետք է պահվեն գրադարանի նյութերը: Փաստաթղթի պատճենը պահպանվում է մեր գրադարանում, և գրադարանի ներկայիս ղեկավարը՝ Վարվառա Հովհաննիսյանն այս հոբելյանի առիթով սիրով տրամադրեց մեզ, որի համար հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

Դիմումը թվագրված է 4 հոկտեմբերի, 1939 թվականով, այսինքն Հայաստանում իր հիմնավորվելու նախօրեին: Ստորև ցանկանում ենք ներկայացնել այն ամբողջությամբ (ռուսերեն բնագրից թարգմանությունը մերն է՝ Ծ. Մ.) :

«Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհրդի նախագահ
Արամ Սերգեյի Փիրուզյանին
Արվեստի վաստակավոր գործիչ,
պրոֆեսոր Կ.Ս.Սարաջևից
Դիմում

Մոսկվայում ես ունեմ նոտային գրադարան, որը վաղուց է, ինչ որոշել եմ կյանքիս օրոք նվիրաբերել Երևանի պետկոնսերվատորիային: Այդ գրադարանն ինքս եմ հիմնել, համալրել գիտակից ողջ կյանքիս ընթացքում, սկսած 1889 թվականից, դեռ ուսանողական նստարանից, և դա ինձ հաջողվել է մեծ զրկանքների և ջանքերի շնորհիվ:

Նոտաների այդ հավաքածուն, որ գնահատվում է 25-30 հազար ռուբլի (ոսկով), մեծ ճանաչում ունի խորհրդային միության երաժշտական աշխարհում թե՛ իր ծավալով և թե՛ բազմազան պարունակությամբ՝ պարտիտուրներով, կլավիրներով և նվագախմբային նյութերով, և թե՛ նրանում առկա բացառիկ մատենագիր արժեք ունեցող նմուշներով և կոմպոզիտորների հեղինակային ձեռագրերի մակագրված նմուշներով:

Նվիրվում է Կ. Սարաջևի ծննդյան 145-ամյակին

Նվիրաբերելով Երևանի պետկոնսերվատորիային այդ գրադարանը՝ նպատակ ունեմ Հայաստանում հիմնել ֆունդամենտալ նոտային գրադարան, որից հայ երաժիշտները ներկայումս զրկված են: Իմ գրադարանն իր հարստությամբ լիովին կարող է հիմք ծառայել այդ ֆունդամենտալ գրադարանի համար: Այդ իսկ պատճառով ՀԽՍՀ կառավարությանը դիմում եմ քննարկելու և ընդունելու իմ հետևյալ առաջարկներն ու ցանկությունները:

1. Կառավարությունը պետք ստեղծի հանձնաժողով, որի կազմում կլինեն վստահված անձինք՝ կոնսերվատորիայի տնօրինության ներկայացուցիչ, Գրադարանի վարիչ և Հայաստանի երաժշտական մշակույթի իրազեկ ժամանակակից գործիչներ,

2. Այդ հանձնաժողովը պետք է կազմի և քննարկի տարեկան գործունեության պլան, միջոցներ ձեռնարկի պահպանելու, համալրելու և նորացնելու գրադարանը, ուշադրություն դարձնի գրադարանի գույքի չարաշահումներին, Տարեվերջին ներկայացնի հաշվետվություն:

3. Կառավարությունը պարտավորվելու է ապահովել գրադարանի նյութական գոյության պայմաններն ու ընդլայնումը՝ առանձին դրամական ֆոնդ ստեղծելով կամ կոնսերվատորիայի տարեկան ֆոնդից առանձին մաս հատկացնելով գրադարանին.

4. Կառավարությունը պարտավորվում է ապահովել ընդարձակ, լուսավոր տարածք, գրադարանից օգտվողների համար առանձին մասով, ընդ որում հաշվի առնելով, որ հետագայում գրադարանն ընդլայնվելու է իր ծավալով.

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ: Մինչև այդպիսի հատուկ տարածքի տրամադրումը գրադարանը կպահպանվի իմ բնակարանում:

5. Գրադարանի վարիչ պետք է նշանակվի անհատ, որն ունի երաժշտական կրթություն և պարտադիր անցել է համապատասխան փորձառություն և վերապատրաստում գրադարանային գործում.

Իմ կողմից առաջարկված դրույթները քննարկելուց և համապատասխան լրացումներ ու փոփոխություններ կատարելուց հետո կառավարությունը կարող է որոշում ընդունել վստահված մարդ ուղարկելու Մոսկվա՝ հաշվառելու, ընդունելու, փաթեթավորելու և Երևան տեղափոխելու վերաբերյալ.

4 հոկտեմբերի, 1939 թ.»:

Գրադարանային նմուշների հավաքագրումը

Սա այն հիմնաքարն էր, այն կարևոր հենասյունը, որի հիման վրա կաթիլ առ կաթիլ, տեղի և արտերկրի մեր բարեկամների թանկարժեք նվիրատվություններով, ձեռքբերումներով մեծացավ, ընդլայնվեց ու հարստացավ Կոնսերվատորիայի Կոնստանտին Սարաջևի անունը կրող գրադարանը: Ի դեպ, որոշ տվյալներով, ժամանակին իր մեծությամբ, Երևանի կոնսերվատորիայի գրադարանը Հայաստանում երկրորդն է համարվել, հավանաբար Երաժշտական գրադարանից հետո: Այսօր այն իր տեսակով եզակի է: Գրադարանն ունի ավելի քան քսան հազար նմուշ գրականություն, որից 200 կլավիրները և 2 հազարից ավելի նոտաներն ու պարտիտուրները հենց Կոնստանտին Սարաջևի անձնական գրադարանի ֆոնդի անգին նմուշներն են: Գրադարանի պատվավոր ցուցանմուշների մեջ իրենց արժանի տեղն են գրաղեցնում մեծ երաժշտին ուղղված երախտիքի ջերմ խոսքերով մակագրված պարտիտուրները՝ Արամ Խաչատրյանի, Նիկոլայ Մյասկովսկու, Սերգեյ Պրոկոֆևի ստորագրություններով:

Մինչև վերջերս ԵՊԿ գրադարանը, որպես մեր կոնսերվատորիայի ամենանվիրական, ամենաթանկ և կարևոր անկյուններից մեկը, հպարտությամբ ներկայացվում էր մեր դիմորդներին, պատվավոր հյուրերին, այցելուներին:

Գրադարանն այն վայրն է, որի հետ ամենօրյա առընչություններով կապված է այս հաստատություն մրտնող յուրաքանչյուր ուսանող, դասախոս առաջին օրից մինչև վերջ...

Հուզիչ ավանդույթ է դարձել, մեր երախտավորները մեր բուհի ռահվիրայի օրինակով, իրենց անձնական գրադարանները նվիրաբերում են հարազատ բուհի գրադարանին, և գրադարանի հոգատար աշխատակիցների ջանքերով դրանք, որպես առանձին անվանական ֆոնդեր, պահպանվում են գրադարանի պահոցներում: Հուսանք, հիմնանորոգումից հետո մեր գրադարանն է՛լ ավելի գրավիչ ու հարմարավետ կլինի, ժամանակակից պահանջներին համապատասխան, թվայնացված (ի դեպ գրադարանի թվայնացման աշխատանքները նույնպես արդեն մեկնարկել են՝ ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի ինստիտուտի հետ ձեռք բերված համագործակցության շրջանակներում):

Վերջաբան

Հուսանք, որ այդ ամենը մոտ ապագայում իրականություն կդառնա, քանի որ դրա համար ունենք ամենակարևոր նախադրյալները՝ իրենց գործին անձնվեր վերաբերվող մեր գրադարանավարները՝ տիկին Վարվառա Հովհաննիսյանի գլխավորությամբ: Դրա կարևոր նախապայմանը այն հզոր ու անքննելի ավանդույթներն են, որ գալիս են հիմնադիրներից և սերնդե սերունդ փոխանցվում են երիտասարդներին, նրանք էլ, իրենց հերթին, ավագների կողքին իրենց գործի հանդեպ անմնացորդ նվիրումի արժեքավոր դասեր ու փորձառություն են ստանում:

Բոլոր նրանք, ովքեր մեր գրադարանի տեղափոխման օրերին ականատես էին մեր աղջիկների անասելի ծանրաբեռնվածությանը, նրանց անկեղծ հուզմունքին ու սրտացավությանը, կարող են հաստատել, որ մեր գրադարանավարների նվիրվածությունը սահմաններ չունի և չի չափվում նյութական ոչ մի միավորով: Դա անբացատրելի է, դրա միակ բացատրությունը այն մթնոլորտն է, որտեղ նրանք անցկացնում են իրենց օրվա մեծ մասը, իրենց կյանքի գիտակից մասը և չեն պատկերացնում իրենց գոյությունն՝ առանց այդ հոգևոր մթնոլորտի: Ուստի, խոնարհումս նրանց բոլորին:

Եվ լույս հիշատակ մշակութային այս գանձարանի հիմնադրին՝ ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՍՈԼՈՄՈՆՈՎԻՉ ՍԱՐԱՋԵՎԻՆ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Սարաջև Կ. Ս,* Դիմում-նամակը՝ ՀԽՍՀ Ժողկոմխորհրդի նախագահ Արամ Փիրուզյանին, 4.10.1939թ., ԵՊԿ գրադարան, Սարաջևի ֆոնդ:

Sarajev K.S., Letter of Application to Aram Piruzyan, Chairman of the Council of People's Commissars of the ASSR, 4.10.1939, YSC Library, Sarajev fund.

REFERENCES

1. Sarajev K. S., Dimum-namak'' HKhSH zhoghkomkhorhrdi nakhagah Aram Piruzyanin, 4.10.1939 th., YPK gradaran, Sarajevi fond.

Հեղինակի մասին. ԾՈՎԻՆԱՐ ՀՐԱՅՐԻ ՄՈՎՍԻՍՅԱՆ Ավարտել է 1989-ին ԵՊԿ երաժշտագիտության բաժինը (ղեկավար, պրոֆեսոր, արվեստագիտության թեկնածու Ա. Բուդաղյան), 1992-1994-ին՝ Մոսկվայի համամիութենական արվեստի ինստիտուտի ասպիրանտուրան (ղեկավար՝ պրոֆեսոր, արվեստագիտության դոկտոր Իզաբելլա Յոլյան): 2011-ին ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Էդգար Հովհաննիսյանի կամերային-գործիքային և սիմֆոնիկ ստեղծագործությունների ոճական առանձնահատկությունները» (ղեկավար՝ պրոֆեսոր, արվեսատգիտության դոկտոր, պրոֆ. Կ. Ա. Ջաղացպանյան): Դասավանդում է՝ 1994-ից ԵՊԿ Երաժշտության տեսության ամբիոնում, 2004-ից դոցենտի պաշտոնում, 2012-ին դոցենտի կոչում է ստացել: 2018-ից նշանակվել է ԵՊԿ գիտական գծով պրոռեկտոր: Աշխատել է «Արվեստ» ամսագրի, Հայկական Հանրագիտարանի խմբագրություններում: Հեղինակ է՝ մենագրությունների, ավելի քան 30 գիտական և տասնյակ հրապարակախոսական հոդվածների: Զեկուցումներով հանդես է եկել միջազգային, հանրապետական գիտաժողովներում՝ Հայաստանում և արտերկրում (Երևան, Գյումրի, Մոսկվա, Օդեսա, Բաթումի, Ուֆա):

About the author: TSOVINAR HRAYR MOVSISYAN graduated in 1989from the Department of Musicology at the YSC (Research supervisor A. Budaghyan, Ph.D. in Arts, Prof.). In 1992-1994 she completed her postgraduate studies at the Moscow All-Union Institute for Art Studies under the guidance of Doctor of Arts, prof. Isabella Yolian. She worked in the editorial office of "Arvest" magazine, and in the Armenian Encyclopedia Publishing House. Since 1989 she is working at the YSC. In 2018 she was appointed Vice-Rector for Science of the YSC. In 2011 Ts. Movsisyan defended her Ph.D. thesis on «Stylistic Characteristics of Edgar Hovhannisyan's Chamber Instrumental and Symphonic Works" (the guidance of Doctor of Arts, prof. K. A. Jaghatspanyan), for which the HAC of the RA awarded her the scientific degree PhD of Art, and in 2012 she received the academic title of Associate Professor. She is the author of three monographs, published over thirty research articles. She has also presented at international and national scientific conferences in Armenia and abroad.

Об авторе: ЦОВИНАР ГРАЙРОВНА МОВСИСЯН. Окончила: отделение музыковедения ЕРК, научный руководитель канд. иск., проф А. Будагян (1989); Московский всесоюзный институт искусствознания, руководитель доктор иск., проф. Изабелла Еолян (1992-1994). Защитила кандидатскую диссертацию на тему "Стилевые особенности камерно-инструментальных и симфонических произведений Эдгара Оганесяна" , рук. д-р иск., проф. К. А. Джагацпанян (2011), кандидат искусствоведения (2012). Работала: в редакции журнала "Арвест", в издательстве Армянской Энциклопедии. Проректор ЕГК по науке (с 2018). Автор монографий, более тридцати научных статей в периодических изданиях. Выступала с докладами на международных и республиканских научных конференциях в Армении и за рубежом (Ереван, Гюмри, Москва, Одесса, Батуми, Уфа).